ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«29» ապրիլի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ Մ. Անանյան

ԳԲԽ-38/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Շինպլյուս» ՍՊԸ-ի 15.04.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Շինպլյուս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 15.04.2016թ. ներկայացրած բողոքով «Շինպլյուս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ ներկայացրել է բողոք Վանաձորի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ՀՀ ԼՄՎՔ-ԲԸԱՇՁԲ-16/53» ծածկագրով բաց ընթացակարգի դեմ և պահանջել է դադարեցնել «ՀՀ ԼՄՎՔ-ԲԸԱՇՁԲ-

16/53» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.04.2016թ. թիվ 2 արձանագրության 3.1-րդ, 4.1-րդ և 7.1-րդ կետերով կայացված որոշումները:

«Շինպլյուս» ՍՊԸ-ն հայտնել է, որ Վանաձորի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ՀՀ ԼՄՎՔ-ԲԸԱՇՁԲ-16/53» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրել է հայտ: Ընկերության կողմից հայտով ներկայացված թիվ 4 հավելվածը՝ գնային առաջարկը, ներկայացվել է գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ընկերությունը գտնում է, որ Վանաձորի քաղաքապետարանը «Շինպլյուս» ՍՊԸ-ի հայտը մերժելով՝ խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի 1-ին կետով սահմանված պահանջները:

2. Վանաձորի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

Վանաձորի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 21.04.2016թ. թիվ 079/2134 գրությամբ «Շինպլյուս» ՍՊԸ-ի 15.04.2016թ. ներկայցրած բողոքի վերաբերյալ հայտնել է, որ Վանաձորի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ՀՀ ԼՄՎՔ-ԲԸԱՇՁԲ-16/53» ծածկագրով բաց ընթացակարգին հայտ են ներկայացրել «Շինպլյուս» ՍՊԸ-ն և «Լոռիի ՃՇՇ» ՓԲԸ-ն: Հայտերի գնահատման արդյունքում «Շինպլյուս» ՍՊԸ-ի հայտում արձանագրվել է անհամապատասխանություն և հայտը մերժվել է՝ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն:

Վանաձորի քաղաքապետարանը, ի լրումն 21.04.2016թ. թիվ 079/2134 գրության, 25.04.2016թ. թիվ 097/2158 գրությամբ հայտնել է նաև, որ Վանաձորի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ՀՀ ԼՄՎՔ-ԲԸԱՇՁԲ-16/53» ծածկագրով ընթացակարգի հայտերի վերագնահատման արտահերթ նիստի արդյունքում վճարման պահանջագրում արձանագրվել են անհամապատասխանություններ:

3. ԳԲԽ-38/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-38/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Վանաձորի քաղաքապետարանի կողմից Վանաձոր քաղաքի փողոցների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԼՄՎՔ-ԲԸԱՇՁԲ-16/53» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, հայտ են ներկայացրել «Շինպլյուս» ՍՊԸ-ն և «Լոռիի ՃՇՇ» ՓԲԸ-ն:

2. «Շինպլյուս» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած թիվ 1 հավելվածով՝ բաց ընթացակարգին մասնակցելու դիմումում, նշել է, որ Ընկերությունը հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու Վանաձորի համայնքապետարանի կողմից ***«ՀՀ ԼՄՎՔ-ԲԸԱՇՁԲ-16/53»*** ծածկագրով հայտարարված բաց ընթացակարգին:

3. «Շինպլյուս» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած թիվ 4 հավելվածով՝ գնի առաջարկում, նշել է, որ այն ներկայացնում է ***«ՀՀ ԼՄՎՔ-ԲԸԱՇՁԲ-16/53»*** ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի, ***«ՀՀ ԼՄՎՔ-ԲԸԱՇՁԲ-16/53»*** ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և հայտնել է, որ ուսումնասիրելով տրամադրված ***«...ԲԸԱՇՁԲ...»*** ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը՝ Ընկերությունը առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գներով.

ՀՀ դրամ

Չափաբաժնի համարը	Աշխատանքի անվանումը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5	6
1	Վանաձոր քաղաքի փողոցների ընթացիկ նորոգման աշխատանքներ	60.060.000	6.606.600	13.333.320	79.999.920 (յոթանասունինը միլիոն ինը հարյուր իններսունինը հազար ինը հարյուր քսան)

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2016թ. ապրիլի 8-ին ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության՝

- 3.1 կետի համաձայն՝ «Շինպլյուս» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտի թիվ 4 հավելվածում առկա է անհամապատասխանություն:
- 4.1 կետի համաձայն՝ «Շինպլյուս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն:
- 7.1 կետի համաձայն՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Լոռիի ՃՇՇ» ՓԲԸ-ն:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2016թ. ապրիլի 11-ին ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Շինպլյուս» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտի վճարման պահանջագրում առկա է անհամապատասխանություն՝ նշված է ամսաթիվ, սակայն վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի համաձայն՝ ամսաթիվը լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը:

4. ԳԲԽ-38/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Շինպլյուս» ՍՊԸ-ի 15.04.2016թ. ներկայացրած բողոքը և կից ներկայացված փաստաթղթերը, Վանաձորի քաղաքապետարանի 21.04.2016թ. թիվ 079/2134 գրությունը և կից ներկայացված փաստաթղթերը, «ՀՀ ԼՄՎՔ-ԲԸԱՇՁԲ-16/53» ծածկագրով բաց ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 44-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոհիշյալ իրավական ակտերի վերլուծությունից հետևում է, որ եթե գնման ընթացակարգի մասնակիցը ***հայտի ապահովումը*** ներկայացվել է վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգին անհամապատասխան, ապա այս պարագայում մասնակցին ժամկետ չի տրվում անհամապատասխանությունները շտկելու համար:

Այսպիսով գտնում ենք, որ «ՀՀ ԼՄՎՔ-ԲԸԱՇՁԲ-16/53» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան, քանի որ «Շինպլյուս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ***հայտի ապահովումը*** ներկայացվել է վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգին անհամապատասխան, ինչը հաստատվել է թե Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. ապրիլի 11-ին ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետով, թե

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. ապրիլի 25-ին ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրությամբ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Շինպլյուս» ՍՊԸ-ի կողմից 15.04.2016թ. ներկայացված բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և իրավական
խորհրդատվության վարչության գլխավոր
մասնագետ՝ ԳԲԽ-38/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ռ. Մկրտչյան